ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՆԴՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

ԵՀՀ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հանրային խնդրի բացահայտումից մինչև քաղաքականության մշակում

Երևան 2021

«Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի առատաձեռն օժանդակության շնորհիվ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Փաստաթղթում արտահայտված գաղափարները միայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

«Ուղեցույց. հանրային խնդրի բացահայտումից մինչև քաղաքականության մշակում» ձեռնարկը ստեղծվել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի փորձագետներ Արմեն Վարոսյանի և Հայաստան Ստեփանյանի կողմից

Խմբագրումը և սրբագրումը՝ Անժելա Ավագյանի և Ազնիվ Նասլյանի
Էջադրումը և ձևավորումը՝ Անժելա Խաչատրյանի

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021 թ., էջ 38

ՀՏԴ 316.42:061
ԳՄԴ 60.5

Սույն ուղեցույցը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ Քաղաքացիական հասարակություն (ՔՀ) թեմայով: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

- Քննադատական մտածողություն (ՔՄ)
- Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)
- Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)
- Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

© Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021
ISBN 978-9939-896-31-1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ 09

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ 10

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ 19

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ 23

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ 26

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ 28

ՀԱՎԵԼՎԱԾ 5
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ 30

ABSTRACT/ՍԵՂՄԱԳԻՐ 33

«ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԽՈՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ 34

ԳՈՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ

Հիմնախնդրի բացահայտումը (Problem identification) քաղաքականությունների մեջ բարեփոխումների անբաժանելի մասն է, որը գնահատելու և հնարավոր լուծումներ գտնելու հիմնաքարն է նաև այն բացը, որն առկա է գոյություն ունեցող իրավիճակի և ակնկալվող լուծումների միջև:

Հիմնախնդրի արդյունավետ բացահայտման նպատակով սովորաբար մշակվում է գնահատման գործիք՝ համոզվելու համար, թե իրականում խնդիրը գոյություն ունի՞, թե՞ ոչ: Որքան վաղ բացահայտվի հիմնախնդիրը, այնքան արագ կպլանավորվեն գործողություններն, ու կհասցեագրվի հիմնախնդիրը:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից իրականացվող «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակում մշակվել է հիմնախնդրի բացահայտման և ջատագովության նախապատրաստման գործիք և ուղեցույց, որի միջոցով հասարակական կազմակերպությունները կարող են պարզել բացահայտված հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված՝ շահերի պաշտպանություն իրականացնելու իրենց ներուժը:

Գործիքը մշակվել է մասնակցային եղանակով՝ խորհրդակցելով ԴԱՏԱ ծրագրի աշխատակազմի և գործընկերների հետ: Առաջարկվում է աղյուսակի տեսքով, որն ունի հարցերի, պատասխանների, ցուցումների և հավելվածների սյունակներ: Օգտագործողը քայլ առ քայլ պատասխանում է հարցերին՝ հետևելով ցուցումներին: **Եթե լինեն հարցեր, որոնց դժվար կլինի պատասխանել կամ օգտագործողը կհամարի, որ հարցին առնչվող կիրառելի մեթոդները բարելավման կարիք ունեն, առաջարկվում է մինչև շահերի պաշտպանությունը սկսելը ուսումնասիրել և օգտագործել համապատասխան հավելվածները:**

Հավելվածներում ներկայացված են մեթոդներ, գործիքներ, ձևաթերթեր, փորձագիտական ցուցումներ: Դրանց մի մասը լիովին հնարավոր է կիրառել ինքնուրույն, որոշ մեթոդների կիրառման համար կարող է առաջանալ փորձագիտական աջակցության կարիք: Նշված բոլոր գործիքները, ինչպես նաև դրանց կիրառմանը աջակցող փորձագետների տվյալները հասանելի են *https://urbanfoundation.am/language/hy/international-technical-assistance-for-data-program-armenia-2/ և https://hkdepo.am/hy/resources* կայքերում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ

Ո՞ՐՆ Է ՁԵՐ ԲԱՑԱՀԱՅՏԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ (նկարագրել)	ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
	Հիմնախնդիրը ակնկալվող և առկա իրավիճակների միջև անընդունելի անհամապատասխանությունն է: Պայմանավորված տարբեր գործոններով՝ ռեսուրսներ, կարողություններ, քաղաքական օրակարգ, կամք և այլն, հիմնախնդրի լուծման գործընթացը երբեմն երկար է տևում: Ուստի, լավագույն փորձի համաձայն, հիմնախնդիրը բաժանվում է իրագործելի ենթախնդիրների, որոնց քայլ առ քայլ լուծումը հանգեցնում է հիմնախնդրի ամբողջական լուծմանը:

Քայլ առ քայլ պատասխանելով ստորև աղյուսակում նշված հարցերին՝ կհստակեցնեք, թե որքանով է ձեր բացահայտած հիմնախնդիրը արմատական, և որքանով եք պատրաստ տվյալ հիմնախնդրի լուծման նպատակով իրականացնելու շահերի պաշտպանություն: Հարցերին կարող եք պատասխանել ☑ նշումով՝ **«Այո»**, **«Ոչ»**, **«Մասամբ»** սյունակներից որևէ մեկում:

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 1	Առանձնացրե՞լ եք հիմնախնդրի մաս հանդիսացող ենթախնդիրները:	Օրինակ՝ ☑			Լավ մոտեցում է համարվում հիմնախնդրի բաժանումը փոքր ենթախնդիրների, որքան անհրաժեշտ է: Առանձին ենթախնդիրների լուծումները միասին կհանգեցնեն հիմնախնդրի լուծմանը:	Ստորև՝ Հավելված 1-ում, առկա են ենթախնդիրների բացահայտման մեթոդական նյութեր:

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 2	Դասակարգե՞լ եք ենթախնդիրներն ըստ առաջնահերթության:				Ենթախնդիրներն անհրաժեշտ է դասակարգել ըստ առաջնահերթության՝ հերթականությամբ լուծելու նպատակով:	
Քայլ 3	Ինչպե՞ս եք իրականացրել ենթախնդիրների դասակարգումն ըստ առաջնահերթության *(կարող եք դիտարկել ստորև առաջարկված տարբերակները)*:				Առաջնահերթությունների որոշման ձևերը տարբեր են՝ փորձի վրա հիմնված դատողությունից մինչև տարբեր մեթոդների կիրառում *(թիմային քննարկում, շահակիցների հետ քննարկումներ, որոշակի մեթոդների կիրառում)*:	Ստորև՝ Հավելված 2-ում, առաջարկվում են օժանդակ նյութեր, որոնք կօգնեն ենթախնդիրները դասակարգելու ըստ առաջնահերթության:
1	Թիմային քննարկում					
2	Քննարկումներ շահակիցների հետ					
3	Մեթոդի կիրառում					
4	Այլ					

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
	Առաջնահերթ ենթախնդիրը	*(Առաջնահերթ ենթախնդիրը շարադրել այստեղ)*				
Քայլ 4	Ինչպե՞ս պարզեցիք, որ սա խնդիր է *(կարող եք դիտարկել ստորև առաջարկված տարբերակները)*:				Առաջնահերթ խնդրի լուծմանը հետամուտ լինելու համար կարևոր է, որ խնդիրը հետազոտված լինի: Իդեալական կլինի, եթե հնարավոր լինի զրուցել շահակիր կողմերի հետ, անցկացնել պարզ հարցում և/կամ ուսումնասիրել համապատասխան փաստաթղթեր:	Ստորև՝ Հավելված 3-ում, առաջարկվում են շահակիցների վերլուծության, հանրային կարծիքի ուսումնասիրության պարզ մեթոդներ և ձևաթերթեր:
1	Շահակիցների քարտեզագրում					
2	Շահակիցների կարծիքներ					
3	Շահակիցների վերլուծություն					
4	Փաստաթղթերի ուսումնասիրություն					
5	Այլ (նկարագրել)					

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 5	Ձեր բացահայտած խնդիրը որոշում կայացնողների կամ հանրության օրակարգո՞ւմ է *(կարող եք դիտարկել ստորև առաջարկված տարբերակները)*:				Առաջնահերթ խնդրի լուծմանը հետամուտ լինելու համար կարևոր է նաև, որ խնդիրը լինի որոշում կայացնողների, ՔՀԿ-ների և շահակիր այլ կողմերի օրակարգում: Ինչպես արդեն նշվեց, իդեալական կլինի, եթե հնարավոր լինի զրուցել շահակիցների հետ, անցկացնել պարզ հարցում և/կամ ուսումնասիրել համապատասխան փաստաթղթեր:	Կրկին առաջարկվում է օգտվել Հավելված 3-ից:
1	Որոշում կայացնողներ					
2	ՔՀԿ-ներ					
3	Այլ շահակիցներ					
4	Այլ (նկարագրել)					

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 6	(ա) Մշակե՞լ եք Փոփոխության տեսություն:				Փոփոխության տեսությունը բացատրում է, թե ինչպես է նախաձեռնության շրջանակում ձեռնարկված գործունեությունը *(օրինակ՝ ծրագիր կամ քաղաքականություն)* ազդում այն արդյունքների շղթայի վրա, որոնք հանգեցնում են նախատեսված ազդեցությանը:	Ստորև՝ Հավելված 3-ում, առաջարկվում են Փոփոխության տեսության մշակման համար օժանդակ նյութեր:
Քայլ 7	(բ) Վերանայվե՞լ է արդյոք Փոփոխության տեսությունը անկախ փորձագետների կողմից:				Ցանկալի է, որ մշակված Փոփոխության տեսությունը վերանայեն կազմակերպության անդամ կամ անկախ փորձագետներ, մենթորներ, որոնք անմիջականորեն ներգրավված չեն վերոնշյալ գործընթացում:	

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 8	Մշակե՞լ եք հետազոտության հարցերը:				Նախքան ուսումնասիրության մեկնարկը անհրաժեշտ է սահմանել, ձևակերպել ու վերջնականացնել ուսումնասիրության հարցերը:	
Քայլ 9	Մշակե՞լ եք հաղորդակցության և շահերի պաշտպանության պլան:				Շահակիցների քարտեզագրումից և վերլուծությունից հետո անհրաժեշտ է մշակել հաղորդակցության ու շահերի պաշտպանության կուռ պլաններ, որոնք կօգնեն աշխատելու յուրաքանչյուր շահակցի հետ՝ փորձելու դարձնել նրանց դաշնակից կամ առնվազն ձեր հանդեպ չեզոք խնդիրը լուծելիս:	Ստորև՝ Հավելված 4-ում և Հավելված 5-ում, առաջարկվում են հաղորդակցության և շահերի պաշտպանության պլանների նմուշներ ու ձևաթերթեր:

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 10	Եթե այո, ապա արդյոք կատարվե՞լ են հետևյալ պահանջները:				Լավ մշակված հաղորդակցության և շահերի պաշտպանության պլանները պետք է ապահովեն սերտ աշխատանք շահակիցների հետ: Դրանք ներառում են հաղորդակցության ուղերձներ բոլոր շահակիցների համար, հաղորդակցության և շահերի պաշտպանության գործիքներ, ժամանակացույց և այլն:	
1	Բացահայտվել են շահակիցները:					
2	Մշակվել են հաղորդակցության ուղերձներ յուրաքանչյուր շահակցի համար:					
3	Մշակվել են հաղորդակցության և շահերի պաշտպանության գործիքներ յուրաքանչյուր շահակցի համար:					
4	Սահմանվել են հաղորդակցության թիրախները:					
5	Մշակվել է գործողությունների ժամանակացույց:					
6	Այլ (նկարագրել)					

ՔԱՅԼԵՐ	ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ			ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
		Այո	Ոչ	Մասամբ		
Քայլ 11	Ունե՞ք բավարար ռեսուրսներ առաջնահերթ խնդիրը լուծելու համար:				Ցանկալի է գնահատել մարդկային, ֆինանսական, ժամանակային և այլ ռեսուրսները մինչև ուսումնասիրության մեկնարկը, որպեսզի ուսումնասիրության առարկան կառավարելի լինի ձեր տրամադրության տակ գտնվող ռեսուրսներով, հակառակ դեպքում ուսումնասիրության իրականացումը կդժվարանա:	
Առաջնահերթ խնդիրը լուծելու տևողությունը		*Օրինակ՝ 1 տարի*				

Հավելված 1

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Կան հիմնախնդիրների բացահայտման բազմաթիվ մեթոդներ: Ստորև առաջարկվում է մի քանի մեթոդ:

Հարցում: Սա շահույթ չհետապնդող կազմակերպությունների (հետազոտական կենտրոններ, ՔՀԿ-ներ և այլն) փոքր հարցում է: Այն կարելի է իրականացնել դեմ առ դեմ, հեռախոսով, էլեկտրոնային փոստի կամ առցանց որևէ այլ գործիքի կիրառմամբ: Հարցման նպատակն է պարզել համայնքի կամ տվյալ ոլորտի առնվազն 3 ամենակարևոր հիմնախնդիրները՝ ըստ հարցման մասնակիցների: 3-ը առաջարկվող նվազագույն թիվն է: Ըստ մասնագիտական փորձի՝ այս մեթոդն ունի որոշակի հոգեբանական նշանակություն և թույլ է տալիս հնարավորնիս իրատեսորեն վերհանել հիմնախնդիրները. շահակիցները սովորաբար հակված են որպես ամենակարևոր առաջարկել այն հիմնախնդիրը, որի լուծմամբ իրենց համայնքը, շահի խումբը, գուցե անձամբ իրենք հետաքրքրված են: Սակայն փորձը ցույց է տալիս, որ, որպես երկրորդ, երրորդ առաջնահերթություն, նրանք առաջարկում են համայնքի կամ ոլորտի համար առավել կարևոր հիմնախնդիրները: Հիմնախնդիրը կարող է մեծ լինել, և հարցման մասնակիցներին կարելի է խնդրել, որ ներկայացնեն նաև ենթախնդիրներ: Հարցման ընթացքում նշված հիմնախնդիրները/ենթախնդիրները համադրվում են: Ամենաշատ նշվածներից ձևավորվում է հիմնախնդիրների ցանկը:

«Մտագրոհ»: Այս մեթոդը նման է վերոնշյալ հարցման մեթոդին: Առավելությունն այն է, որ այն ինտերակտիվ է: Կարող է իրականացվել սենյակում կամ առցանց: Մասնակիցներին կրկին առաջարկվում է ներկայացնել համայնքի կամ տվյալ ոլորտի առվազն 3 ամենակարևոր հիմնախնդիրները և այդպիսով ստանալ հիմնախնդիրների ցանկ:

«Սրճարանային քննարկում»/Café dialogue: Սա ինտերակտիվ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս միաժամանակ բացահայտելու մի շարք ոլորտներում առկա հիմնախնդիրները: Օրինակ՝ եթե քննարկվում է 4 ոլորտ, յուրաքանչյուր ոլորտի հիմնախնդիրները քննարկվում են առանձին սեղանի շուրջ: Հերթագայման/ռոտացիայի սկզբունքով բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն քննարկելու և բացահայտելու

առաջարկվող յուրաքանչյուր ոլորտի հիմնախնդիրները: Արձանագրված բոլոր հիմնախնդիրների համադրմամբ ձևավորվում է դրանց ցանկը՝ ըստ ոլորտների: Բացի մասնակիցներից՝ այս մեթոդի կիրառման համար անհրաժեշտ են ֆասիլիտատորներ և օգնականներ, որոնք կվարեն քննարկումները, գրառումներ կանեն և կամփոփեն: Այս մեթոդը արդյունավետ է դեմ առ դեմ հանդիպման դեպքում:

Գրասենյակային/փաստաթղթային հետազոտություն: Այս մեթոդը լրացնում է բոլոր վերոհիշյալներին: Հիմնախնդիրները բացահայտվում են կառավարության ռազմավարական փաստաթղթերի, փորձագետների և հետազոտողների նյութերի ուսումնասիրության ընթացքում: Մեթոդը կարելի է կիրառել և՛ առցանց, և՛ դեմ առ դեմ տարբերակներով:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հարցաթերթի նմուշ

_____ 202 __թ. _____ Հարցաթերթի #:

Վերնագիր (օրինակ՝ Համայնքի խնդիրների վերհանման նպատակով ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ)

Հարցազրուցավար _____

Հարցազրույցի ամսաթիվը _____ Հարցազրույցի ժամը _____

Համայնք _____ Մարզ _____

Հասցե _____

Բնակելի սեփական տուն ____ Բնակարան ____

Հարցազրուցավարին ուղղված բոլոր հրահանգները հաստ շեղատառ են, փակագծերի մեջ: Հետևե՛ք բոլոր հրահանգներին տնային տնտեսության ներսում համապատասխան հարցվողին ընտրելու համար: Կարդա՛ բոլոր հարցերը ճիշտ այնպես, ինչպես գրված են:

Բարև Ձեզ: Իմ անունը _____ է: Ես օգնում եմ հասարակական հարցում անցկացնելու ձեր համայնքի զարգացման քառամյա ծրագրի վերաբերյալ: Ձեր պատասխանները հաշվի կառնվեն համայնքի քառամյա զարգացման ծրագրի մշակման գործընթացում: Հարցազրույցը կտևի մոտ 5 րոպե: Իմացե՛ք, խնդրեմ, որ մենք երաշխավորում ենք Ձեր պատասխանների գաղտնիությունը: Ձեր անունը որևէ կերպ չի հիշատակվի հարցման արդյունքները հրապարակելիս: Կարո՞ղ ենք սկսել: Շնորհակալություն:

Ո՞րն է Ձեր համայնքի ամենակարևոր հիմնախնդիրն այսօր: ***(Եթե նշվել է մեկից ավելի պատասխան, ապա հարցրո՛ւ. «Եթե ընտրելու լինեիք մեկը, ո՞րը կնշեիք որպես ամենակարևորը»:)***

_____

____ Չգիտեմ/Չեմ կարող ասել

Ո՞րն է Ձեր համայնքի երկրորդ կարևոր հիմնախնդիրն այսօր:

_____

____ Չգիտեմ/Չեմ կարող ասել

Ո՞րն է Ձեր համայնքի երրորդ կարևոր հիմնախնդիրն այսօր:

_____

____ Չգիտեմ/Չեմ կարող ասել

Շատ շնորհակալություն Ձեր օգնության համար: Ունեմ ևս մի քանի հարց: Խնդրում եմ հիշե՛ք, որ Ձեր բոլոր պատասխանները կպահվեն միանգամայն գաղտնի:

Վերջին տարիների ընթացքում Դուք ինքներդ մասնակցե՞լ եք արդյոք Ձեր համայնքի խնդիրների բացահայտման և լուծման գործընթացներին:

____ Այո՛

(Հարցրո՛ւ՝ ինչպե՞ս/ե՞րբ _____)

____ Ո՛չ

Ո՞րն է Ձեր ամենաբարձր կրթական աստիճանը: ***(Մի՛ կարդա ցանկը:)***

____ Տարրական կրթություն (4 տարի)

____ Թերի միջնակարգ կրթություն

____ Միջնակարգ կրթություն (***հարցրու և շրջանակի մեջ վերցրու. 8 կամ 10 տարի)***

____ Թերի բարձրագույն կամ տեխնիկական կրթություն

____ ՀԲարձրագույն կրթություն (4 կամ 5 տարի)

____ Բարձրագույն և հետբուհական որակավորման աստիճան (մագիստրոսի կամ գիտությունների թեկնածուի)

Քանի՞ տարեկան եք: _____

(Շրջանակի մեջ վերցրու՛ սեռը:) Արական Իգական

Շնորհակալություն աջակցության համար: Եթե ունեք որևէ հարց այս հարցազրույցի վերաբերյալ, կարող եք դիմել մեր կազմակերպությանը: ***(Անհրաժեշտության դեպքում կարող եք փոխանցել կազմակերպության տվյալները:)***

Հավելված 2

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ \ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ	ցածր	միջին	բարձր
բարձր	v		
միջին	*		x
ցածր			

v - որոշում կայացնող

x - բիզնես

* - հասարակություն

Աղյուսակ 1. Ջրային ոլորտի շահակիր կողմերը

Շահակիցներ	Նկարագրություն
(1) ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտեն (նախկին ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտե) պատասխանատու է երկրի բնակչությանը խմելու և ոռոգման ջրով ապահովելու, կեղտաջրերի հեռացման, հիդրոտեխնիկական կառուցվածքների և դրենաժային համակարգերի շահագործման համար: Այն համակարգում է «Վեոլիա ջուր» ընկերության և ՋՕԸ-երի աշխատանքները:
(2) ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ, նախկին ՀՀ բնապահպանության նախարարություն)	_____
(3) ՀՀ ՇՄՆ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (ՋՌԿԳ)	_____

Ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը 2017 թ.	Ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը 2020 թ.	Ծրագրի վրա ունեցած ազդեցությունը 2017 թ.	Ծրագրի վրա ունեցած ազդեցությունը 2020 թ.
Փոքր	**Մեծ**	**Մեծ**	**Մեծ**
Մեծ	**Մեծ**	**Մեծ**	**Մեծ**
Միջին	**Մեծ**	**Մեծ**	**Մեծ**

Հավելված 3

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
Ի՞նչ կոնկրետ գործողություններ և ուղենիշներ կստեղծի այս աշխատանքը:	Կարճաժամկետ ի՞նչ ազդեցություն եք ակնկալում այս աշխատանքից: Պարզե՛ք յուրաքանչյուր արդյունքի թիրախային լսարանը:
• Անցկացնել համապարփակ հետազոտություն ՔՀԿ-ներին պետական միջոցների բաշխման ոլորտում. դրամաշնորհներ, սուբսիդիաներ, նվիրատվություններ և նվերներ • Անցկացնել պետական գնումների գործընթացների ու ընթացակարգերի և դրանց թափանցիկության վերաբերյալ համապարփակ հետազոտություն՝ ստեղծելով կառավարության կողմից 2018-2020 թթ. ոչ պետական և ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ֆինանսական հատկացումների փաստերի վրա հիմնված շտեմարան • Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ Վերլուծական կենտրոնի հետ համատեղ մշակել քաղաքականության բարեփոխումների առաջարկությունների տվյալահեն 2 փաթեթ	• Պետական միջոցների կառավարման ոլորտում փոփոխությունների հանրային պահանջարկի աճ • Պետական միջոցների կառավարման ոլորտում փոփոխությունների հիմնական ուղղությունները հստակեցված և արդարացված են բոլոր շահակիցների համար • Բարձրացել է պետական միջոցների կառավարման ոլորտում շահակիցների տեղեկացվածության մակարդակը • Բարձրացել է պետական միջոցների կառավարման ոլորտում բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ դիսկուրսի (խոսույթի) մակարդակը՝ կենտրոնանալով հատուկ խնդիրների և դրանց լուծման մեխանիզմների վրա
Շարունակելի	------
Շարունակելի	------
------	------

ՑՈՒՑԻՉՆԵՐ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
Ինչպե՞ս եք չափելու այս արդյունքների ձեռքբերման գործում ձեր աշխատանքի առաջընթացը:	Երկարաժամկետ ի՞նչ ազդեցություն եք ակնկալում այս աշխատանքից դրամաշնորհային ծրագրի ավարտից հետո:
• Վերլուծություն ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպություններին կառավարության կողմից 2018-2020 թթ. արված ֆինանսական հատկացումների գործընթացի և դրանց իրավական հիմքերի մասին • Պետական գնումների գործընթացի և ընթացակարգերի, դրանց թափանցիկության 2018-2019 թթ. և 2020 թ. առաջին կիսամյակի վերլուծություն	• Հանրային քաղաքականության բարեփոխումների առաջարկների փաթեթների մշակման միջոցով անհրաժեշտ ոլորտային փոփոխությունների ճանապարհային քարտեզի մշակում՝ որպես բարեփոխումների ծրագրերի և գործողությունների ուղենիշ • Շահակիցների ուժեղացված ազդեցությունը պետական միջոցների կառավարման գործընթացների և կառավարության կողմից ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսական հատկացումների գործընթացների վրա • Ստեղծել վերջին երկու տարիների պետական միջոցների կառավարման պրակտիկայի և գործընթացների տվյալների շտեմարան՝ դրանով իսկ խթանելով ոլորտում փաստերի վրա հիմնված և ապացույցներով պայմանավորված գործընթացների ներուժը
_____	_____
_____	_____
_____	_____

Հավելված 4

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ

Ընդհանուր նպատակ	Հասցեագրվող հիմնախնդիր	Լսարան	Ուղերձ
Նախաձեռնել ջրային ոլորտի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հանրային իրազեկման և կրթության արշավներ	Ջրի կորստի՝ որպես հրատապ խնդրի մասին իրազեկության պակաս Սեփականատիրոջ և անձնական պատասխանատվության զգացման բացակայություն	Ջրօգտագործողներ	Յուրաքանչյուր բնակիչ ունի Հայաստանի ջրային ռեսուրսները պահպանելու անձնական պատասխանատվություն Գործի՛ր հիմա, վաղը ուշ է լինելու Ջուրը կյանք է, ամեն կաթիլը թանկ է

Գործիքներ	Վարքագծի ակնկալվող փոփոխություն	Ցուցիչներ	Վկայակոչվող/ ստուգող աղբյուրներ
Սոցիալական գովազդ Իրազեկման տպագիր նյութեր Հեռուստա-հաղորդումներ Հոդվածներ Միջոցառումներ Դասընթացներ դպրոցներում Համայնքային ժողովներ	Ավելի բարձր իրազեկություն ջրակորուստների վերաբերյալ Սեփականա-տիրոջ և անձնական ավելի մեծ պատասխա-նատվության զգացում	Գործողու-թյուններ, առնվազն 10 իրազեկված մարդ	Դիմումների քանակ՝ ուղղված օրենսդրական բարեփոխում-ներին Հաջողության պատմություններ Ուսուցում ստացած աշակերտների անվանացանկ Տպագրված հոդվածներ և հրապարակված գրառումներ սոցցանցերում Ծահերի պաշտպա-նության նախաձեռնու-թյուններ

Հավելված 5

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Նպատակները	Գրե՛ք ձեր քարոզարշավի երկարաժամկետ նպատակը: Նշե՛ք քարոզարշավի մոտակա նպատակները, որոնք կհանգեցնեն խնդրի լուծմանը: Ի՞նչն է ձեզ համար հաղթանակ: Ի՞նչ որոշակի բարելավումներ կբերի քարոզարշավը մարդկանց համար: Արդյոք այն կօգնի՞ նրանց գիտակցելու իրենց ուժն ու նշանակությունը: Ի՞նչ կարճաժամկետ կամ փոքր հաղթանակների կարող եք հասնել երկարաժամկետ նպատակի ճանապարհին:	---
Կազմակերպչական հարցեր	Որքա՞ն դա կարժենա: Կարո՞ղ եք ակնկալել կամավորների օգնությունը: Ո՞ւ կարող եք դիմել ֆինանսական աջակցության համար: Որո՞նք են նրանց պահանջները: Ձեր կազմակերպությունն ունի՞ անհրաժեշտ սարքավորներ:	---

	Ունե՞ք որակյալ աշխատակիցներ: Դուք ներքին հակասություններ ունե՞ք, որոնք անհրաժեշտ է հաղթահարել հաջող քարոզարշավ անցկացնելու համար:	
Մարդիկ, աջակիցներ, ընդդիմախոսներ	Ովքե՞ր են ապրում այդ բնակավայրում: Ո՞ւմ խնդիրն է դա: Ի՞նչ կշահեն նրանք: Ի՞նչ վտանգներ կան: Ի՞նչ խմբեր են կազմվել: Ովքե՞ր են ձեր հավանական աջակիցները: Որտե՞ղ են նրանք (ի՞նչ կառույցներում, համայնքներում...): Ովքե՞ր են ձեր ընդդիմախոսները: Ինչպե՞ս կարելի է չեզոքացնել նրանց ազդեցությունը: Ի՞նչ կորուստներ կկրեն նրանք ձեր հաղթանակի դեպքում: Որքա՞ն ուժեղ են նրանք:	---
Թիրախային խմբեր	Ո՞րն է ձեր թիրախային խումբը: Ովքե՞ր են ձեր հարցով որոշում ընդունում: Կարո՞ղ եք ազդել նրանց վրա: Ճանաչո՞ւմ եք նրանց, ովքեր կարող են ազդել ձեր թիրախային խմբի վրա:	---

	Ինչպե՞ս եք ստանալու նրանց աջակցությունը քարոզարշավի ընթացքում:	
Մարտավարություն	Յուրաքանչյուր թիրախային խմբի համար գրեք մարտավարություն, որը այն կարող է կիրառել ազդեցություն գործելու համար: Դա կարող է լինել. • իրավաբանական գործողությունների ձեռնարկում, • օրինաստեղծում (օրենսդրության փոփոխությունների և լրացումների նախագծերի մշակում), • աշխատանք ՀԼՄ-ների հետ (օրինակ՝ մամուլի ասուլիսների կազմակերպում), • հասարակական ունկնդրումներ, • կրթական սեմինարներ, ֆորումներ, • պահանջների առաջադրում, • գործադուլներ, • ընտրողների ուսուցում, • բանակցություններ: Մարտավարությունը պետք է լինի ճկուն, ստեղծագործական (ստեղծարար) մոտեցում ունենա, համապատասխանի իրավիճակին, հասկանալի լինի մարդկանց և ուղղված լինի որոշակի թիրախային խմբի:	---

Abstract

This guide is a tool for Civil Society actors and organizations them to design actions in order to advance local and national issues as policy initiatives. With the help of the tool, it is possible to analyze the context of the existing problem, the availability of data, relevant experts' resources, the stakeholders and communication channels, and the possible impact of the advocacy action. The tool is a collection of various hands-on methods and approaches that can be applied for conducting advocacy and policy initiatives.

Սեղմագիր

Ուղեցույցը գործիք է, որի միջոցով հասարակական կազմակերպությունները կարող են պարզել իրենց շահերի պաշտպանության հիմնախնդիրների լուծման ներուժը: Այն հնարավորություն է տալիս վերլուծելու հիմնախնդրի համատեքստը, փաստերի առկայությունը, հիմնախնդրին առնչվող փորձագիտական վկայակոչումները, շահակիցների, շահառուների և ազդեցության շրջանակը: Գործիքը տարբեր գործնական մեթոդների և մոտեցումների հավաքածու է և կարող է օգտագործվել ջատագովության և քաղաքականությունների մշակման նախաձեռնությունների համար:

«ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակված այլ նյութեր

- ԵՀՀ կրթություն և ուսուցում, 2021, ***https://epfarmenia.am/hy/document/EPF-Education-and-Learning***
- ԵՀՀ գենդերային քաղաքականությունը. տեսական հիմնահարցեր, 2021, ***https://epfarmenia.am/hy/document/EPF-Gender-Policy***
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների համար նախատեսված ձեռնարկ, 2021, ***https://epfarmenia.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021***
- Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց, 2021, ***https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021***
- Բռնության մշակույթը Հայաստանում, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia***
- Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations***
- Հետազոտություն ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia***
- Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերաբերյալ հետազոտություն, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities***
- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Մաս 1, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA***
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia***
- Հարաբերություններ առանց շփումների, 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Relations-without-Interactions***

- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, ***https://epfarmenia.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia***
- Կրոնի կամ հավատքի ազատության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանում, Վրաստանում և դրանից դուրս: Համաժողովի հաշվետվություն (անգլերեն), 2019, ***https://epfarmenia.am/document/EPF-FoRB-2019-Report***
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, ***https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region***
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, ***https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm***
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար. ձեռնարկ, 2019, ***https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs***
- Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, ***https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking***
- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, ***https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game***
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, ***https://epfarmenia.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018***
- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, ***https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art***
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, **https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature**

Նախատեսվում է հրապարակել

- Գենդերային մեյնսթրիմինգը քաղաքականության մեջ. ձեռնարկ դասընթացավարների համար, ***https://epfarmenia.am/hy/document/DATA-Manual-for-Trainers-Mainstreaming-Gender-into-Policie***s

Publications under the 'EPF University' headline

- EPF Education and Learning. (2021) ***https://epfarmenia.am/document/EPF-Education-and-Learning***
- EPF Gender Policy. (2021) ***https://epfarmenia.am/document/EPF-Gender-Policy***
- Handbook for Guardianship and Trusteeship Bodies (in Armenian). (2021) ***https://epfarmenia.am/hy/document/Handbook-for-Guardianship-and-Trusteeship-bodies-2021***
- Ethical Guidelines for Social Research (in Armenian). (2021) ***https://epfarmenia.am/hy/document/DATA-research-ethics-manual-socies-2021***
- Culture of Violence in Armenia (in Armenian). (2020) ***https://epfarmenia.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia***
- Culture of Violence in Armenia. Reflection and recommendations (in Armenian). (2020) ***https://epfarmenia.am/hy/document/Roots-of-Violence-in-Armenia-recommendations***
- Research on Alternative Dispute Resolution in Armenia. (2020) ***https://epfarmenia.am/document/Research-on-Alternative-Dispute-Resolution-in-Armenia***
- Research On Custody and Guardianship Authorities in Armenia (in Armenian). (2020) ***https://epfarmenia.am/hy/document/Research-On-Custody-and-Guardianship-Authorities***
- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020) ***https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA***
- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020) ***https://epfarmenia.am/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia***
- Relations Without Interactions. (2020) ***https://epfarmenia.am/document/Relations-without-Interactions***
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020) ***https://epfarmenia.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia***
- Contemporary Issues of Freedom of Religion or Belief in Armenia, Georgia and Beyond. Conference Report. (2019) ***https://epfarmenia.am/document/EPF-FoRB-***

2019-Report

- Armenia and The Region (in Armenian). (2019) **https://epfarmenia.am/hy/document/Armenia_and_the_Region**
- Publishing Guide (in Armenian). (2019) ***https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm***
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian). (2019) ***https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs***
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) ***https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking***
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) ***https://epfarmenia.am/document/MSTA-Creative-Game***
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) ***https://epfarmenia.am/document/OAS-Highlights-CELoG-2018***
- Culture, Literature and Art. (2018) ***https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art***
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian). (2018) ***https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature***

Expected to be published

- Manual for Trainers Mainstreaming Gender into Policies (in Armenian) ***https://epfarmenia.am/hy/document/DATA-Manual-for-Trainers-Mainstreaming-Gender-into-Policies***

This Guide has been prepared by NORC at the University of Chicago and “Urban” Foundation for Sustainable Development in the framework of Data for Accountable and Transparent Action Programme (DATA) funded through the United States Agency for International Development (USAID). The opinions expressed in this work do not necessarily reflect the official position of the Eurasia Partnership Foundation and its partners.

Guide: From public issue to policy development/ Written by Armen Varosyan and Hayastan Stepanyan, experts of the Urban Foundation for Sustainable Development

Edited and proofread by Angela Avagyan and Azniv Naslyan
Layout and design by Anzhela Khachatryan

Eurasia Partnership Foundation, 2021, pages 38

This publication is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of Civil Society (CS) direction. The series include texts which belong to four large thematic directions:

- Critical Thinking (CT)
- War and Peace (WP)
- Civil Society (CS)
- Education, methodology of history, culture and values (EMHCV)

©Eurasia Partnership Foundation, 2021